**ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքը ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանին ՀՀ վարչապետ նշանակվելու կապակցությամբ**

Հարգարժան ՀՈՎԻԿ ԱՐԳԱՄԻ

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքը Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում Ձեր նշանակման կապակցությամբ: Վստահ եմ, որ կառավարման համակարգի Ձեր տարիների վաստակը, փորձն ու հմտությունը մեծապես օգնելու են Ձեզ այս բարձր և պատասխանատու պաշտոնում: Հուսով եմ, որ Ձեր գլխավորությամբ ՀՀ Կառավարությունը կարողանալու է լուծել իր առջև դրված խնդիրները՝ ի բարօրություն մեր երկրի, մեր ժողովրդի:

Հպարտ ենք պետական կառավարման համակարգում մեր համալսարանի խորհրդի նախագահի հերթական հաջողությունն արձանագրելու առիթով: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ, մաղթում առողջություն, հաջողություն, ուժ և կորով՝ նախանշված նպատակներն իրագործելու համար:

Հարգանքով՝ Ձեր բարեկամ,

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյան